



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ալիք-Գրիգորյան

Պայմ

1891թ.

հայ

904
921

556

2011

Фунд

356

ՀԱԿ
904
921
18

Հ Ա Ր Ք

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԵԿ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆԻ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

1895

1891

Է. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆցի պատրան

Ե Ր Ե Ւ Ա Ն





Дозволено Цензурою. Тифлисъ 21-го Мая
1891 года.

(310)
41

904-2011

18900

2012

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՎԱՐԴԻԵՍ, ուսուցիչ, մոլորուած մի ինչ
գըքով:
ԿԱՐԱՊԵՏ, Վարդգեսի ընկերը:
ԳԱՐԵԳԻՆ, մի դիւանատան ծառայող:
Շուտ շուտ զործ է ածում հասկանումեռ՝
բառը և, գլխաւորապէս այն դէպքում, երբ
ցանկացած խօսքը վրայ չէ գալիս:
ԾԱՌՈՒԻԿ, Վարդգեսի ծառան:
Գիւղացի: Ակզրում մի տեսակ տպաւորեցու-
ցիչ երկիսղով է խօսւմ ու արքի մասին, իսկ
յետոյ, գողալով և ահ ու սարսափով:

Անցու պատահում է Երևանում:

Զ Ա Ր Ք

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱՇՈՎ:



Եսարանը ներկայացնում է մի
սենիակ, զուրկ առանձին զար-
դարանքներից. մի գրասեղան,
մի քանի աթոռներ և մի եր-
կայն թախտանման դիւանի լցնում է
սենիակի դատարկութիւնը:

ՏԵՍԻԼ 1.

ՎԱՐԴԻԵՍ

(Սէղանի ճար նագաած է արդում և գիրտ: Մէ ըս-
տէ կարդալուց յետոյ, պինդ խնում է գրտն, այնուհետ-
ու ըստուն և նորա կանոն ըստաւնիութը շարժվում է
և ինչը ընկնելով անուն է մշտին, բարիացած ասում է)
Ոչինչ . . . ոչինչ չեմ հասկանում. . . Չեմ հա-
կանում թէ ինչ է ուզում ասել սորա հեղի-

նակը . . . և այս տեսակ ցնդաբանութիւնը, անկապ մոքերի անկապ շարվածքը՝ փիլիսոփայական են անուանում, գիտնական աշխատութիւն են հոչակում . . . (Թիջոց): Բայց գուցէ, ճշմարիտ ե'ս չեմ հասկանում . . . գուցէ . . . ե'ս եմ սխալը . . . գուցէ այնպիսի վերացական մըտքեր են պարունակվում սորա մէջ, որ ինձ համար անմատչելի է . . . գուցէ իմ խելքից բարձր է չգիտեմ, միայն այս գիտեմ, որ փոքր իշատէ հասկացող մարդիկ հիանում, սքանչանում են այս գրքի վերայ. . . և երբ խօսքը այս գրքի վերայ է գալիս, այնպիսի դրական արժանաւորութիւններ են գտնում սորանում, որ, ճիշտն ասած, ես դժուարանում եմ մի որ և է միտք անգամ յայտնելու և ես, ստիպուած, սկսում եմ մի այնպիսի ճռճռան բառերով գովել, գովաբանել, որ ինձ շրջապատողների գովասանքը անգոյն պերճախօսութիւն է դառնում իմի առաջ. . . բայց մինչեւ ե՞րբ . . . (Միջոց): Գարեգինը երեխի հիմայ կգայ. խոստացել էր գալու . . . մի լաւ թափ տամ նորան. տեսնենք նա՞ ինչ է մտածում, նա՞ ինչ անձնական կարծիք ունի այս գրքի վերաբերութեամբ. . . Կարապետին էլ առանձին. . . մի խօսքով այնպէս պէտք է անել, որ կամայ թէ ակամայ, լոյս գցեն իւրեանց ներքին համոզմունքը:

ՏԵՍԻԼ 2.

ՎԱՐԴԳԵՍ ԵՒ ԾԱՌՈՒՆ

ԾԱՌՈՒԿ, ՆԵՐ ՀՊՆԵՐՎ:

Այ, աղա. . .

ՎԱՐԴԳԵՍ

Հը. ի՞նչ կայ:

ԾԱՌՈՒԿ

Ախր ըսէնց բան չի ըլնի է. . .

ՎԱՐԴԳԵՍ

Ի՞նչ է որ:

ԾԱՌՈՒԿ

Էս մեր բակումը չարք ա բհամ էկէ:

ՎԱՐԴԳԵՍ

Ի՞նչպէս թէ „չարք“:

ԾԱՌՈՒԿ

Չարք, էլի. . . հեռի յարգեց, հեռի քուսուրք էրեսից՝ սատանայ:

ՎԱՐԴԳԵՍ պարագաներ և ծառալուն:

Սա. . . տա. . . նայ. . .

ԾԱՌՈՒԿ

Հրամանքեզ, աղա:

ՎԱՐԴԳԵՍ

Այդ ի՞նչպէս է „բհամեկել“ . . . ապա պատմիր — հետարքիր է:

ԾԱՌՈՒԻԿ

Դու, աղա, մի' ծիծաղա. էս թաւուր բանում
հանաք չեն անի. էս հանաք մասխարութէն յի...
Ասենք դու տիրացու ես, մօնթ ես կարթացնում,
դու էլ ես շատ կարթացէ, ամա բայց էս թա-
ւուր բաներ դու համ չես տեսէ...

ՎԱՐԴԻԳԵՍ

Լաւ, ծառուկ, դու սիսալվում ես. ես չեմ
ծիծաղում. ես հետաքրքիր եմ լինում:

ԾԱՌՈՒԻԿ

Հա... ըտէ՞նց:

ՎԱՐԴԻԳԵՍ

Դէ ասա տեսնեմ, այդ ինչպէս է „չարքը“
երեացել:

ԾԱՌՈՒԻԿ

Հէնց մութը մթնումա թէ չէ, էս էրկու,
իրեք շարաթ կլնի, մեր հայաթի պատառա-
կերին զարալթու ա էրկում:

ՎԱՐԴԻԳԵՍ

„Ղարալթուն“ ինչ է:

ԾԱՌՈՒԻԿ

Եանի, ընէնց... մի սե բան... շուաք, է՛լի:
Մէկ տեսնումես՝ ըստեղ ա, մէկէլ տեսար՝ էն
քնջումը, մէկ էլ տեսար՝ պատի գլխին, մէկ էլ
խազէինենց նարդիւանի առաջ... աչքերն էլ—ոնց
որ մի ջուխտ կրակ. եա դէսն ա պլստրացնում,

եա դէնը... Զէ՛, աղա. էքուց ինձ ճամփու դի.
Էլ ես ըստեղ չեմ մնայ:

ՎԱՐԴԻԳԵՍ

Այ մարդ, ինչ ես յիմար յիմար խօսում. մա-
զերդ սպիտակել են և դու դեռ „չարքից“ ու սա-
տանայից ես վախենում.. Ինչ չարք, ինչ բան:

ԾԱՌՈՒԻԿ

Ամեն քշէր դու ես տեսնում թէ ես...
երեկ քշէր, համ, պօզերն էլ տեսայ...

ՎԱՐԴԻԳԵՍ

Այդ անկարելի բան է... աչքիդ է երեացել:

ԾԱՌՈՒԻԿ

Եդ ա է՛... յուսում առածներդ չէք հա-
ւատայ. համա... եալաշ, աղա. հմի չարք ըլ-
կայ, էլի:

ՎԱՐԴԻԳԵՍ

Տօ, մարդ, ինչ ես գիտ գիտ դուրս տալիս:

ԾԱՌՈՒԻԿ

Դէ հմի որ ասեմ, չես հաւատայ. ախր
վեց—օխտ տարէկանի, որ մեր գեղում մի չարք
ին բռնէ ու Մարուքենց մարաքն ին քցէ. ախր
ես ինքս եմ տեսել է՛:

ՎԱՐԴԻԳԵՍ

Ա. մարդ, ո՞վ էր բռնել... ինչպէս էին
բռնել...

ԾԱՌՈՒԿ

Ե՛հ գու որ ծիծաղում ես՝ ես քեզ հետ
դաւի չունեմ:

ՎԱՐԴԳԵՍ

Չեմ ծիծաղում, չեմ, այ յիմար... Բայց ու-
զումնմ հասկացնել, որ այդպիսի բան չի կա-
րող լինել:

ԾԱՌՈՒԿ

Ախր ո՞նց չի ըլնի... ընէնց ա միտո, ո՞նց
որ էսօր:

ՎԱՐԴԳԵՍ

Եթէ սատանայ էր, ինչպէս էին բռնել.
ասա տեսնեմ:

ԾԱՌՈՒԿ

Սատանայ չէր, աղա,—չարք էր:

ՎԱՐԴԳԵՍ

Դէ չարքն էլ սատանայի ճուտն է, էլի—
նոյն սատանան է:

ԾԱՌՈՒԿ

Այ ասեմ. ախր էդ չարքերը, թուհ, նահ-
լաթ չար սատանին, շատ են սիրում ձին: Մեր
գեղի հարեան կարօյին քեահլան ձի ունէր...
էն վախտը ես օխտ—ութ տարեկանի.—Առա-
ւոտները տէնում էր, որ իրա քեահլանը ջար-
թուած, քափ ու քրտնիքի մէջ կորած ա ու եա-
լի մազերը՝ յուսած, համա ընէնց էր յուսած

ըլնում: որ հինգ, վեց սհաթ չարչարուելուց ետե՝
անջախ ին բաց անում... Մէկ, էրկու տասը,
քսան... հընկեր, հարեանը ասեցին թէ չարք
ա, սատանայ ա. պէտքա դրան բռնել, թէ ոչ
ձին չի դիմանայ, կսատկի...

ՎԱՐԴԳԵՍ ՃԵՇԱՊԱՆ:

ՅԵՄՈՅ ԲԱՆԵցի՞ն:

ԾԱՌՈՒԿ

Ոնց չէ, աղա, ջանն էլ չհանեցի՞ն: (Ա-Ելէ
հա-արացած իւր պատմութեան վերայ): Զիու մէջ-
քը բռնեցին, լաւ սիրուն կուպը քսեցին, որ
ինչ ա չարքը, նրան չարչարելիս, նստի վրէն ու
կպչի վրիցը.—Եգպէս էլ էլաւ. մի վախտ, լի-
սը լիսանալիս չարքը ուղեցել ա ծլկի... համա
բայց, եալաշը... տեղն ու տեղը կպել էր ձիու
մէջքին:

ՎԱՐԴԳԵՍ ՃԵՇԱՊԱՆ:

ՅԵՄ՞ոյ, յԵՄ՞ոյ:

ԾԱՌՈՒԿ

Եննա էլ էն որ կարօն, շատ զոչչաղ տղա-
մարթ էր, օղորմի իրան, մէկէլ տարին մեռաւ...
քշէրհանայ, լիսը բացուելիս, նրան բռնել էր
ձիուցը կպած ու ձեռաց սիրոր ասեղ էր ցցէ,
եննա էլ տարել էր Մարուքենց մարաքըն ու
դուռն էլ վրէն պինդ շինէ:

ՎԱՐԴԳԵՍ

Եւ գու այդ չարքին տեսա՞ր:

ԾԱՌՈՒԿ

ԹՆ՞ց չէ, աղա ջան:

ՎԱՐԴԻԳԵՍ ԱՄՅՈՒՋԱԺ:

ՔՊԱՀՔԵՐՈՎ. աղա մինկարագրիր տեսնենք:

ԾԱՌՈՒԿ

Չէ, ասենք, ես իմ աշքերով չեմ տեսէ,
ամա բայց իմ թայերը տեսել են. այ, հէնց մէ-
կը կարօն—հազիր բռնել էր, էլի: Խի՞ որ՝ մեր
հօրն ու մօրից քիչ ենք լսել չարքերի, դեերի
ու սատանէքանց հմար:

ՎԱՐԴԻԳԵՍ

Եւ դու կարծում ես, որ այդ սատանան,
այդ չարքը մեր տան տիրոջ ձիու համար է
գալի՞ս:

ԾԱՌՈՒԿ

Հալբաթ... Չէ, աղա, ինձ ճամփու դիր:

ՎԱՐԴԻԳԵՍ ՏԱՐԱԲԵՐԵԼ Ե ՃԵԺԱՂԵԼ:

Ա. ա՞... ուրեմն անցեալ գիշեր գոււ ես
սրանց ձիու մէջքը կուպր քսել, հա՞... լա՞,
որ սատանային բռնէի՞ր... (ՃԵԺԱՂ) հա, հա, հա, ...

ԾԱՌՈՒԿ ՏԱՐԱԲԵՐԵԼ Ե-Ր ՇԵՆԻՆ ՇՆԵԼ:

ԱՍՈՇ... աղա:

ՎԱՐԴԻԳԵՍ

Թէ տան տէրը կիմանայ, տես ինչ խաղ կը-
խաղայ քո գլուխը. թէ չարքի փոխարէն քո

դունչ ու պուռնկդ կուպր չքսեց—ինչ ուզում
ես, ասա:

ԾԱՌՈՒԿ

Աղա, Ասսու սիրու խաթէր հմար, բերնիցդ
բան չթոցնես:

ՎԱՐԴԻԳԵՍ ՃԵԺԱՂԵԼ:

Լաւ, լաւ, գնա բանիդ: Այդ յիմար բա-
ները գլխիցդ հան: (ԾԱՐԱ-ԷԼ ՀԱՐԱ-ԱԾ ԳԻՆ-ԵԼ:
ՃԵԺԱՂ) հա, հա հա հա... Մեր տան տիրօջ ձի-
ու մէջքը կուպրն է քսել, որ այդպիսով սա-
տանայ բռնի... հա հա հա... այ խայտառակ
բան... տան տէրս էլ տակն ու վրայ է եղել, բար-
կութիւնից մազերն էր պոկոտում, թէ՝ այս
ինչ թշնամութիւն է որ խեղճ ձիուցն են հա-
նել. երկու փութ նաւթ փչացրին, մինչեւ ձիու
մէջքի կուպրը մաքրեցին... հա հա հա... այ
քեզ օյին... հա հա հա... Զարմանալի բան...
ինքը 60—70 տարեկան ծերունի կլինի և գեռ
մինչեւ հիմա էլ համոզուած է որ սատանայ
կայ և պէտքէ կուպրով միայն կպցնել ձիու
մէջքից և այնպէս բռնել: (ՃԵԺԱՂ):

ՏԵՍԻԼ 3.

ՎԱՐԴԻԳԵՍ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ

Բարի երեկոյ: Չէի՞ր սպասում: Լաւ,

ուրախ տրամադրութեան մէջես:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

Կարապե՞տ.—բարով: Մեր տղայ, աչքով
շտանք. այս մի քանի միջոց է, որ շուտ շուտ
ես գալիս ինձ մօտ.—ի՞նչպէս բացատրենք:

Վ.Ա.ՐԱՊԵՏ սրտին առած:

Հը... թէ չես ընդունում—գնամ:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ կոդրուելով:

Զէ՛, ինչ ես խօսում: շատ ուրախ եմ: Ես
մի թեթև բան էլ ունեմքեզ հետ: (Խօս+ խառ-
նէլ) բայց նոր բան գիտես:

Վ.Ա.ՐԱՊԵՏ

Հ՞նչ կայ:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

Մեր ծառուկը սատանայ է ուզում բռնել:
Վ.Ա.ՐԱՊԵՏ սովորած:

Ի՞նչպէս:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

Այս քանի գիշեր, ասում է, „չարք“ է երե-
սում մեր բագումը և ինքն էլ... ի սէրն Աս-
տուծոյ ուրիշի բան չասես, նամանաւանդ մեր
տան տիրոջ ականջը չգցես...

Վ.Ա.ՐԱՊԵՏ

Միամիտ եղիր:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

...ծածուկ սորանց ձիու մէջքը կուպրն է

քսել, որ չարքը՝ գայ նստի ձիու վերայ ու կըպ-
շի նորա մէջքից:

Վ.Ա.ՐԱՊԵՏ

Եւ ինքն էլ նորան բռնի... (Էպրէը ծէժառ):

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ նոյնողէն ծէժառըլ:

Ինչպէս ասում են „ի խուտ և կուտ“
համ ուզում է բռնել այդ չարքը, համ էլ ա-
սում էր թէ՛ ինձ ճանապարհ գցիր վաղը. և
ինքը երկիւղից, կարծես, դողում էր:

Վ.Ա.ՐԱՊԵՏ ծէժառըլ:

Ուղիղ ես ասում: թէ հանաք ես անում:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ նոյնողէն:

Աղնիւ խօսք:

Վ.Ա.ՐԱՊԵՏ նոյնողէն:

Հա հա հա—.—բայց այդ ի՞նչ պէտքէ լինի:
Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

Զգիտեմ, ճշմարիտ. միայն նորա խօսքերից
երեսում էր, որ մի շուաք է տեսնում շարու-
նակ այս քանի գիշեր մեր բակում:

Վ.Ա.ՐԱՊԵՏ առանջին ճարտունած:

Ըլմի... այդ լաւ է...

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ լուլը:

Ի՞նչպէս:

Վ.Ա.ՐԱՊԵՏ շինուած:

Լաւ, այդ թող. ուրիշ ինչ ես անում:

Վ.Ա.ՐԴԻԳԵՍ

Ոչինչ... նոր այս գիրքն էի կարգում:

ՄԵԿ կարդացել եմ; հիմայ էլ կրկնում եմ:

ԿԱՐԱՊԵՏ

Հա՞ շատ լաւ ես անում: որ քսան անգամ էլ կարդա՞ էլի քիչ է: ի՞նչ մոքեր...
ի՞նչ գեղեցիկ շարամանութիւն...

ՎԱՐԴԻԿԵՍ ճառապանջունեամբ:

Ի հարկէ... ճիշտ որ երեւելի աշխատութիւն է:

ԿԱՐԱՊԵՏ

Աքանչելի', մինչեւ անգամ:

ՎԱՐԴԻԿԵՍ Թ աւասի վրայունուն:

Այս, սքանչելի', զարմանալի', յոյժ տենչալի', աննման...

ՎԱՐԱՊԵՏ նայելով նորա աշխերին:

Հանաք ես ան՞ում:

ՎԱՐԴԻԿԵՍ զայելով ի-ըետն:

ԶԵ՞ ես հանաք չեմ անում և... մի՞թէ կառկածել անգամ կարելի է...

ԿԱՐԱՊԵՏ ա-ելի աշխատուն:

Երբէք: (Յանկար ճառաբերելով և հանելով ժայռ ժամացոյց՝ նայում է): Բայց ուշացայ... առայժմ մնաս բարեւ:

ՎԱՐԴԻԿԵՍ

Հօր, ու՞ր ես շտապում:

ԿԱՐԱՊԵՏ ագլուրուն երթելուն:

Ոչ ինչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թոթչնիկ,

Սիրոյ ժամերն ի յանտառին

Ըզմայլեցան ի քո ձայնիկ.

Դու ևս թռչնիկ իմ հայրենեաց Կրկու
Թունի, արէ, ակարը է բայց: անգամ:
ՎԱՐԴԻԿԵՍ

Հօր, կրկին „սիրոյ ժամերու“ ի՞նչ արեցիր:
ԿԱՐԱՊԵՏ

Շատ բան և ոչինչ: Սատանայ և բանելէլու:
Մնաս բարեւ (գնում է):

ՎԱՐԴԻԿԵՍ էալից:

Ի անգէվուն հասկացայ. իսկ սատանան ինչ
բան ունի այդտեղ:

ԿԱՐԱՊԵՏ դրան մը:


Հասկանալու համար՝ այդ գիրքը լաւ
կարդա:

ՏԵՍԻԼ 4.

ՎԱՐԴԻԿԵՍ մայն:

Սա էլ տարուել է իւր սիրուհու վերայ...
Եւ ո՞ւմ աղջիկն է, ո՞վ է՝ մինչեւ այսօր չի հասկացվում, բայց խօսքերից երեսում է, որ, իր,
զարգացած աղջիկ պէտքէ լինի... Ե՞ս, ի՞նձ ինչ:
(Նայելով գլուխ), Ուժի... այս անպիտան գիրքը
ինձ համար ցաւ է գառել... ես չեմ կարողանում շարունակ այսպիսի խայտառակ գիմակի
տակ ծածկուած մնալ... ինձ թվում է, որ
միւսներն էլ այնքան են հասկանում, որքան

904 - 2014
(3/10 4/1)



և ես... որ ամենքն էլ կամենալով իւրեանց
գիտուն և հասկացող ձեւացնել—գովում են որ-
քան կարողանում են... եւ, ճշմարիտ, յիմա-
րութիւն չի՝ լինիլ արդեօք քո կողմից, երբ ա-
մենքը կարդում են, հասկանում են, հիանում
են, իսկ գու ասե՞ս՝ „ոչինչ չեմ հասկանում“...
ո՞ւմ ասես, ինչպէս ասես... (Քջոյ): Մի խօս-
քով... սա ինձ համար հանելուկ է և հանե-
լուկ անբացագրելի... կամ աւելի պարզն աս-
ած՝ սա մի տեսակ „չարք“ է, որ ինձ գիշեր
ու ցերեկ հանգիստ և դադար չէ տալիս:

ՏԵՍԻԼ 5.

ՎԱՐԴԳԻՍ ՊԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԵՐԻ ԳԱՅՐԵ

Բարի երեկոյ, Վարդգէս:

ԳԱՐԵԳԻՆ

Այ, Աստուծոյ բարին. ինչո՞ւ այսքան ու-
շացար:

ԳԱՐԵԳԻՆ

Ծառայութիւնից, հասկանում ես, նոր
դուրս եկանք: Տօ, Ծառուկդ գժուե՞լ է ի՞նչ է:

ԳԱՐԵԳԻՆ ՃԵՇԱԿԱՆ:

Հ՞ը, ի՞նչ է որ:

ԳԱՐԵԳԻՆ

Հէնց քուչի դոնից ներս մտայ թէ չէ, հաս-
կանում ես, տեսնեմ մէկը եախիցս պինդ բըռ-

նեց ու քիչ էր մնում, որ ջարդ ու փշուր անի...
մի հաստ փայտ էլ ձեռքին կար... ի՞նչ ես ու-
զումն ասի, ո՞վ ես... վ'ա, Ծառուկ, խօմ գըժ-
ուել չե՞ս... հասկանում ես... „վայ, աղա, ես
վինավատ եմ համեցիր“ ասաց:

ԳԱՐԵԳԻՆ ՃԵՇԱԿԱՆ:

Վայ... ուզեցել է քեզ սատանայի տեղ
բռնի... հա հա հա...

ԳԱՐԵԳԻՆ ԱՄՐՅԱԿԱՆ:

Ի՞նչպէս թէ...

ԳԱՐԵԳԻՆ

Ախար մեր Ծառուկը սատանայ է ուզում
բռնել:

ԳԱՐԵԳԻՆ

Չեմ հասկանում: գու ես գժուել, հաս-
կանում ես, թէ քո Ծառուկը:

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՅՈՒՆԱԿԵԼ:

Եւ ինչպէս է սիրտ արել: Համ վախենում
է, համ էլ վրայ է գալի՞ս:

ԳԱՐԵԳԻՆ

Ես քեզ չեմ հասկանում:

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱՌՈՒԻՆ

ԾԱՌՈՒԻՆ ՀԱՐՅՈՒՆ ՆԵՐԻ ՀԱՐՅՈՒՆ Լ ԷՄՐՀՐԴԱՆ ՀԵՐ-
ՊԵՐ ՀԱՆՆԵԼ: ՎԱՐԵԴՔԵՔԻՆ ԲԵՐԻ ԷՄՐԴՐ:

Աղա, աղա, մի ըստեղ համեցիր...

Նառուկը և Վարդպէսը բեմի խորքում ծածուկ խօսում են, իսկ Գարեգինը, տեսնելով այդ նասում է զբասեղանի մօտ և շուր է շուր է տալիս գրքի թերթերը:

ՎԱՐԴԻԳԵՍ

ՀԸ, ինչ կոյ:

ԾԱՌՈՒԻԿ Ճաշուուկ և խոշհրդաւոց:

Ելի էկաւ... հայաթումն ա:

ՎԱՐԴԻԳԵՍ ՀԱՅԱԹՈՎԱԼՅՆ:

Այ մարդ, այդպէս բան չի կարող լինել.
Խելքդ գլուխդ ժողովիր:

ԾԱՌՈՒԻԿ ՇՊԱՅԱԼ

Աղա մի ըէվօլդ տու:

ՎԱՐԴԻԳԵՍ

Ինչ ես յիմար յիմար խօսում:

ԾԱՌՈՒԻԿ

Զէ, աղա, մի վախեցի. ըէվօլը որ հետո
ըլնի՝ սիրտս պինդ կըլնի. — Էնքան էլ չեմ վա-
խենայ:

ՎԱՐԴԻԳԵՍ

Ա, մարդ, լաւ տեսա՞ր:

ԾԱՌՈՒԻԿ

Ոնց չէ, աղա... հէնց, ըսէնց, կողքիս էր...
ՎԱՐԴԻԳԵՍ

Ա. մարդ, գուցէ շուն էր կամ կատու...
ԾԱՌՈՒԻԿ

Ի՞նչ ես ասումի աղա. ընէնց տեսայ, ոնց
որ քեզ եմ տեսնում... բոյը կարճ, գլուխը՝
ըսէնց հա՛... (յայց է պալէս մէ արշէն պարածու-

լէն, յեւ+Երը իշտէնց հերացնէլ): Մազերը, աղա,
մի գաղ գեննին վիռուած էր... աչքերը հօ—ոնց
որ գժոխիքի կրակ—կայծակին էր տալի...

ՎԱՐԴԻԳԵՍ

ՑԵՄՈՅ:

ԾԱՌՈՒԻԿ

Եննա էլ էն որ՝ ձեռք ու ոտքս գողմանի բըռ-
նեց... քափ ու քրտինքս ինձ կոխեց... աչքերս
բաց արի թէ չէ... ըսէնց... հալածակուեց...
Աղ'ա, մի ըէվօլդ ու ու. որ ձեռքիս ըլնի՝ չեմ
վախենայ:

ՎԱՐԴԻԳԵՍ

Ուզում ես վեր առ. բայց զգոյշ կաց, հա...
ԾԱՌՈՒԻԿ

Խի՞. ես էրէխայ ե՞մ:

ԳԱՐԵԳԻԿ

Էդ ինչ էք ձեռ ու ոտ ընկել, Վարդպէս,
հացի պատրաստութիւն չտեսնես—ճշմարիտ,
ուտող չկայ:

ՎԱՐԴԻԳԵՍ

Զէ, ուրիշ բան է. կասեմ: (Գնում էն):

ՏԵՍԻԼ 7.

ԳԱՐԵԳԻԿ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ

Գարեգինը նորէն զաղվում է զրքով. այդ միջոցին կարապետը լք-
փոթուած ներա է մանում միս գանից:

ԳԱՐԵԳԻԿ

Կարապետ, բարով. ո՞րտեղից էս վախտ:

ԿԱՐԱՊԵՏ ՀՅՈՒՆ-ԱՃ:

Անցնում էի, ներս մտայ:

ԳԱՐԵԳԻՆ շարունակ նայելով երեսն:

Հը... մի տեսակ ես երևում... շփոթված ես կարծես:

ԿԱՐԱՊԵՏ

Զէ, ոչինչ... (Ա-առնչեն): Զի' լինում է լի...
(Գարեգին) է՛, ի՞նչ կայ, ի՞նչ չկայ:

ԳԱՐԵԳԻՆ

Նոր, հասկանում ես, ծառայութիւնից ե-
կայ: Վարդգէսը, չգիտեմ ինչու համար, կան-
չել էր:

ԿԱՐԱՊԵՏ ի՞ն ՀՅՈՒՆԱԼՈՒ:

Իսկ ո՞ւր է նա...

ԳԱՐԵԳԻՆ

Չգիտեմ: նո՛ր դուրս գնաց: Ի՞նչպէս էր
որ չպատահեցիք:

Գարեգինը շոր է տակիս զրբի թերթը, իսկ Վարապետը նորա հար-
ցին պատասխան չէ տակիս և, մօտենալով լուսամուտին, հետաքր-
քրութեամբ նայում է դուրս. աս մաքով զբաղուած է:

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՅՆՔ ԵՒ ՎԱՐԴԳԵՍ

ՎԱՐԴԳԵՍ անբառական ներս ճանելով:

Ես էլ որ ընկել եմ այս խենթի խելքին:

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ է որ... ո՞ւմ խելքին:

ՎԱՐԴԳԵՍ

Այս մեր Ծառուկի. ո՞րտեղից է գլուխը
մտել—չգիտեմ...

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչը, սատանա՞ն:

ՎԱՐԴԳԵՍ

Վա՛, դու երբ եկար:

ԿԱՐԱՊԵՏ

Նոր: Զէ՞ որ դու ասում էիր, որ ինձ հետ
գործ ունեմ...

ՎԱՐԴԳԵՍ

Հա՛, ունեմ:

ԳԱՐԵԳԻՆ

Ախար էգ ի՞նչ սատանայ է. ես, հասկա-
նում ես, դեռ ոչինչ չեմ հասկացել. դու էլ
բան չես ասում:

ՎԱՐԴԳԵՍ

Տօ, եղբայր, յիմար, անտաշ ծնօղների, կըր-
թութեան հետեւանք է և աւելի ոչինչ. երե-
խայութեան ժամանակ այնքան են ծնօղները
կամ շրջապատողները, սատանաների դեերի,
չարքերի մասին պատմել ու վախեցրել, որ յի-
մայ՝ մի կատու, մի շուն մութ տեղ տեսնելիս,
մեր Ծառուկը կարծում է թէ սատանայ է:

ԿԱՐԱՊԵՏ

Է՛, թողէք ի ոէրն Աստուծոյ այդ յիմարին.
Էլ ուրիշ բան չունէք, ի՞նչ է, խօսելու:

ԳԱՐԵԳԻՆ

Ճիշտ որ... (Մէջը): Հա՛. ինչ էի ուղում
հարցնել քեզ, վարդգէս. միթէ էս գիրքը նոր
ես կարդում:

ՎԱՐԴԳԻՍ

Զէ: Կրկնում եմ, աւելի հիմնաւորապէս
ուսումնասիրելու համար:

ԳԱՐԵԳԻՆ

Ես էլ եմմի երկու անգամ կարդացել. — ինչ
գեղեցիկ է...

ՎԱՐԴԳԻՍ

Հաւանօւմ ես, հա՞:

ԳԱՐԵԳԻՆ

Հաւանելու պէ՞ս: Սրա գրովը, հասկա-
նում ես, հանձար—է, հանձար:

ԿԱՐԱՊԵՏ

Ճիշտ որ հանձար է:

ԳԱՐԵԳԻՆ

Եւ ով էլ չի կարդում, հասկանում ես,
զմայլում է:

ԿԱՐԱՊԵՏ

Ինչ ասել կուղէ. և ինչ մտքեր...

ԳԱՐԵԳԻՆ

Մտքերը, այսպէս ասած, հասկանում ես,
մարդարտի նման թափում են:

ԿԱՐԱՊԵՏ

Իսկ բառե՞րը... նախադասութիւննե՞րը...

ԳԱՐԵԳԻՆ

Եւ գիտե՞ս որքան նորահնար, հասկանում
ես, քննոյշ բառեր է ստեղծել, որքան քաղցրա-
հնչիւն, հասկանում ես...

Դրսում, պատշգամբում, շրբվթըրփոց է լսվում և սենեակի
դրանը պինդ կպշում են: Սոքա վեր ևն թուշոմ տեղերից և ոգում
են դուրս գնալ, բայց ծառուկը լեզապատռայիտ ու յետ քաշուելով
մանում է բեր:

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱՌՈՒԽ

ՎԱՐԴԳԻՍ զարժացած:

Հը... Ծառուկ...

ԾԱՌՈՒԽ

Թո՞ւհ, նահլաթ չար սատանին... թուք ու
մուքս կպաւ:

ԳԱՐԵԳԻՆ հետարշ+բութւա՞ն:

Ծառուկ, ի՞նչ կայ է, հասկանում ես,
ի՞նչ պատահեց:

ՎԱՐԴԳԻՍ

Այ մարդ, ի՞նչ ես սպրինել:

ԾԱՌՈՒԽ

Զէ, ազա... ըսէնց չի ըլնի...

ՎԱՐԴԳԻՍ

Ախար ինչ է, է:

ԾԱՌՈՒԽ

Նոր էլի հետո էր...

ԿԱՐԱՊԵՏ

Ով է՛, ո՞վ, ինչ՞ը:
ԾԱՌՈՒԿ ապրանքով:

Նա :

ԳԱՐԵԳԻՆ

Ո՞վ նա :
ԾԱՌՈՒԿ
Նա է՛լի, թուշ նահլաթ իրան...
ՎԱՐԴԻԳԵՍ

Ի՞նչպէս տեսար, ա մարդ :

ԾԱՌՈՒԿ նո-+ը կողածէ ոլէս :

Ես նրան տեսայ թէ չէ, ինձ քցեցի բալկօնը... տենեմ, նա է՛լ ետնիցս վազեց... ըստէզ դուգումն կոտրուեց... հէնց բէվօլի ոտը քաշեցի թէ չէ՝ թարսի նման՝ բէվօլը փստաց... նա է՛լ ալբէալը շուն դառաւ ու վնդստալէն իրան պատից քցեց քուշէն: — բէվօլիցը վախեցաւ, աղա:

ԳԱՐԵԳԻՆ

Ա. մարդ, հասկանում ես, դա հէնց շուն է եղել:

ԿԱՐԱՊԵՏ ծէժառալով:

Ի հարկէ:

ԾԱՌՈՒԿ

Ի՞նչ ես ասում աղա ջան... բօյը ո՞նց ո՞ր մի բարդի... հմի է՛լ բարակ ու երգար էր... (Խորհրդառող և եղին=լած, ըստ ըստ նո-+ը իս-լ պալով) բօյը, աղա ջան, բանցը էր, շատ բանցը

էր... ամա գլուխը, ըսէնց ներքեռումն էր... ինձ, թէ ասեմ կանչում էր... կտոես ծիծաղում էր... թուշ նահլաթ, նահլաթ իրան... ՎԱՐԴԻԳԵՍ

Լաւ, լաւ, յիմար յիմար մի դուրս տալ. գնա տեղդ ու քնիր: Էլ ես քեզ կանչելու չեմ: Բէվօլվերն էլ մօտդ պահիր, չը: (Սուտանց) Խենթացել է կատարեալ:

ԾԱՌՈՒԿ

Աղա...

ՎԱՐԴԻԳԵՍ

Գնա, գնա շատ մի խօսիլ: (Սուտանց): Ես սորան տանեմ խոհանոց, ապա թէ ոչ վախենում է: (Ծարու-չին) Գնա, ես է՛լ եմ գալիս... Խոհանոցից էլ դուրս չըգ'աս: (Գնու-չին):

ՏԵՍԻԼ 10.

ԳԱՐԵԳԻՆ, ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՑԵՏՈՅ ՎԱՐԴԻԳԵՍ
ԿԱՐԱՊԵՏ առանչին:

Այս աւելի լաւ:

ԳԱՐԵԳԻՆ

Եւ ի՞նչ ես կարծում, կարապետ. սա որ էս օրին է, հասկանում ես, շատ շուտ կարող է վնասուել:

ԿԱՐԱՊԵՏ

Եւ ի՞նչ զարմանիք:

ԳԱՐԵԳԻՆ

Տես սրան ինչքան են վախեցրել երեխայութեան ժամանակ, որ էսպէս ծերացած, հասկա-

նում ես, դեռ երեխայի պէս դողում է։
ԿԱՐԱՊԵՏ

Եւ շատ պարզ է։ մուժ ժամանակ մի չըն-
չին ձայն, տրախկոց, ծառի խշոց լսի թէ չէ,
իսկոյն կսկսի աշքերին երեալ զանազան սա-
տանաներ։

ՎԱՐԴԻԿԱՆ ՆԵՐԻ ԳԹԱԾՈՅ

Չէ, սորա երեակայութիւնը խանգարուած
է։ նոյն իսկ ջղերը վնասուած են ահ ու եր-
կիւղից։

ԳԱՐԵԳԻՆ

Ես կարծում եմ որ, հասկանում ես, էլ
դրա գլխից չի կարելի հանել սատանաների,
հասկանում ես, գոյութեան միտքը և...

ՎԱՐԴԻԿԱՆ

Էլ ն՞որ՝ անկարելի է։ երեխայութեան ժա-
մանակ խոր արմատացած տպաւորութիւնը մին-
չեւ մահ չի կարելի գուրս հանել։ — Այդ արդէն
օրէ՛նք է։

ԳԱՐԵԳԻՆ

Բայց, սպասեցէք, ես մի գուրս գնամ։ մի
լաւ ձեր բակը նայեմ։ (Դնուած է) Հիմա գալիս եմ։

ՏԵՍԻԼ 11.

ՎԱՐԴԻԿԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ՎԱՐԴԻԿԱՆ

Հա... Այս լաւ եղաւ։ մենք հազիր մենակ

ենք։ Ես քեզ մի երկու խօսք ունեմ ասելու։
Կարապետ։

ԿԱՐԱՊԵՏ

Ասա։
ՎԱՐԴԻԿԱՆ

Միայն մեր մէջ մնայ։ Մենք եղբայր տը-
ղերք ենք։ Ես քեզ վերայ վստահ եմ։
ԿԱՐԱՊԵՏ

ՀՇ, չլինի՞ դու էլ ես իմ օրին։
ՎԱՐԴԻԿԱՆ

Հա, հա, ես ու իմ Աստուածու, հա։
ԿԱՐԱՊԵՏ

Սիրահարուել ե՞ս, ո՞ւմ վերայ։
ՎԱՐԴԻԿԱՆ Հիանակուած։

Չէ, սիրահարուած չեմ։ — Այս գրքի մասին
եմ ուզում ասել։

ԿԱՐԱՊԵՏ

Հ'ա, ի՞նչ։
ՎԱՐԴԻԿԱՆ

Այ, եղբայր, ես ուզում եմ երեսիս գիմա-
կը վերցնել։
ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչպէս։
ՎԱՐԴԻԿԱՆ

Եղբայր, ես՝ այս գրքից բան չեմ հասկա-
նում։ Հաւատա որ սա անկապ, անիմաստ ցըն-
դաբանութիւն է, աբսուրդ է։ Ահա սա է իս-
կական „չարքը“, Կարապետ, որը ինձ հանգիստ

չի տալիս, որը քանդում է սիրտս... խանգարում է ուղեղս...

ԿԱՐԱՊԵՏ

Ինչ ես ասում: ուրեմն գեռ խելքդ չի հասնում: բայց ուսուցիչ մարդ ես. սա երեկի, երեկի աշխատութիւն է, հիմնաւոր աշխատութիւն է:

ՎԱՐԴԳԵՍ կոպրուած և բարիացած:

Ախար ինչն է սորա երեկին, (շատ պինդ իշխանութիւնն) ինչն է սորա հիմնաւորը, ասա տեսնեմ:

ԿԱՐԱՊԵՏ

Ինձ մօտ ասեցիր, ել ուրիշի չասես.—նշանակութիւնդ կ'կորցնես. նոյն իսկ քո ընկերներդ վատ գաղափար կ'կազմեն վերադ:

ՎԱՐԴԳԵՍ ա-ել-է կոպրուած:

Այդ ուղիղ է: Բայց ես միայն քե՛զ ոմ ասում եւ յուսով եմ, որ ոչ ոքի բան չես ասիլ: Եւ գիտե՞ս ես փառը է մնում ցնորուեմ, խելագարուեմ: Միթէ, ճշմարիտ ամենքն ել հականում են այս գիրքը, իսկ ե՛ս եմ միայն...

ԿԱՐԱՊԵՏ

Եւ միթէ կարելի է չհասկանալ:

ՎԱՐԴԳԵՍ կը եմ առաջիկ բարիացած:

Ախար այս զահրումարումն ինչ կայ հասկանալու. ես ճաքեցի է՛... Այ, օրինակի համար կարգա՛ այս կտորը:

ԿԱՐԱՊԵՏ վերանելով գերու նորա յեւ+ից և շարունակ նայելով ցոյց առանձ աւելին: Միջոց):

Հա՛... սա ճիշտ գերմանական ոճ է:

ԳԱՐԵԳԻՆ ա-ել-է բարիացած:

Գերմանական ո՞ճս որն է... հայերէն ես գրում, հայերէն գրիր, էլի: Ինձ տեսակ մարդ լինէր գրողը՝ կ'քարկործէին ախար:

ԿԱՐԱՊԵՏ անգիւացարով նորանելով բերեց:

Անպատճառ:

ՎԱՐԴԳԵՍ շառապով բարելով նորա յեւ+ը:

Ուրեմն համաձայն ես ինձ հետ:

ԿԱՐԱՊԵՏ հոլորած:

Այսինքն... եղբայր ել ինչ թագցնեմ, ես հենց սկզբից բան չեմ հասկացել սորանից: Բայց ինչ արած. ո՞ւմ ասեմ: որ չծիծաղի վերաս:

ՎԱՐԴԳԵՍ այս առած:

Ճշմարիտ:

ԿԱՐԱՊԵՏ

Ճշմարիտ:

ՎԱՐԴԳԵՍ

Ե՛, փառք Աստուծոյ. Կուրծքիս քարը վայր ընկաւ: Հիմա ես համոզվում եմ, որ ես սխալ չեմ, որ ոչ ոք էլ ոչինչ չէ հասկացել. միայն իրար խաբում ենք: (Առանցն) Հիմա պէտքէ խօսալ Գարեգինի հետ:

S E U H L. 12.

ՆՈՅՆՔ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ

ՈՉԻՆՇ ՀԿԱՅ:

ԿԱՐԱՊԵՏ

Այս լուսամուտը կարելի է բանալ, Վարդ-
գես:

ՎԱՐԴԳԵՍ

ԻՆչո՞ւ չէ, բաց:

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆԱԾՎՆ:

Այս լաւ եղաւ, այսուեղից կ'երգեմ և նո
կ'լոի ինձ: Ահա և նորա լուսամուտը, նորա...
իմ թռչնակիս...

Կարապետը սկզբում մոռքով զբաղուած, շուտ շուտ ման է
դալիս, յետոյ սկսում է կամաց, քթի տակ, մրմնջալ մի ինչ եղա-
նակ, յետոյ, ոգեսրվելով, բարձրացնում է ձայնը և երգում ոգում
և գում, չհեռանալով լուսամուտից: Խակ միմոյն ժամանակ Վարդգէսը
և Գարեգինը խօսում են շարունակ: Մինչև այս տեսլի կէսը շա-
րունակվում է երգը և խօսակցութինը զունթաց, այսինքն մի կող-
մում կարապետն է ման գալիս, մրմնջում և յետոյ երգում, խակ միա
կողմում Վարդգէսն և Գարեգինն են խօսում:

Զգո՞ւմ ես դու, արդեօք սրտիս ցաւերը*).
Ես գեգերուած, յունիմհանգիստ, դադար...

Կարատվում են յուսոյ քնարիս լարերը...

Հասիր, օգնիր, արա ինձի մի ճար:

Զգո՞ւմ ես դու... (3, 4 անդամ):

Եւ մեղեղին տխուր հնջմամբ, յուսահատ
Երթունքներիս, կուրծքիս վերսոյ սառած

(*), Պոյմեշ լի ты՞ւ երդի եղանակով:

Փշրփում է, ոչնչանում աննդհատ

Կեանքս: շունչո, հոգիս իւր հետ առած:

Զգո՞ւմ ես դու... (3, 4 անդամ):

Բայց այս երգը այնպէս պէտքէ յարմարացնել միաների խօ-
սակցութեան հետ, որ Վարդգէսի անոց հիմոյ մեր նորութիւնը
նախապատճեան հետ, վերջանայ և երգը, այնպէս որ Գարեգինը
“Պարագիր, Կարապետ” ասելիս, Կարապետը բարկութեամբ ասի, Հէւ:

ՎԱՐԴԳԵՍ սէրտ առած:

Գարեգին, ես քեզ կանչել էի (Յեւ+ը Շնե-
լւ գլուխ Լելայ) սորա համար և դու, եթէ ին
սիրում ես, պէտք է ճիշտն ասես: Խօսքս այս
գրքի մասին է:

ՎԱՐԵԳԻՆ

Օ սրա մասին... սա, հասկանում ես...

ՎԱՐԴԳԵՍ ընդհատութելով նոյն փօն+ը:

Եղբայր, դու էլ ինչպէս և ամենքը, հիա-
ցած ես, բայց ճիշտն ասած... ես ոչնչ չեմ
հասկանում այս գրքից: Սա մի տեսակ խաօս է,
մի տեսակ... նորահնար բառերի անտեղի և
անկապ կուտակումն է... մի տեսակ չարիք
է, որ...

ՎԱՐԵԳԻՆ

Զէ, ինչո՞ւ, հասկանում ես...

ՎԱՐԴԳԵՍ զնային:

Այս, այս, ես հասկանում եմ: դու յես
հասկանում... անմատչելի, անհասկանալի նա-
խադասութեանց լիութիւն է, որոնցից ոչինչ
չէ դուքս գալիս—այ ինչ է:

ԳԱՐԵԳԻՆ

ԶԵ, ինչու... պէտք է ասած, որ... հասկանում ես...

Վ.Ա.ՐԴԻԳԻՍ ա-ԵԼԻ ՅԱԿԵՐԸ

Այո, ես հասկանում եմ, որ դու ԷԼ նոյնքան ես հասկանում, որքան և ես եմ հասկանում այսինքն՝ ոչի՞նչ չես հասկանում սորանից:

ԳԱՐԵԳԻՆ

Բայց... սպասիր, առաջ դու ինքդ էիր, հասկանում ես, գովում:

Վ.Ա.ՐԴԻԳԻՍ

Այո. ես ԷԼ միւսների պէս, քեզ պէս, վախենում էի չ'հասկացող երեալ, վախենում էի ընդհանուրի անմիտ դատաստանից... (Քջայ և Յան): ԴԵ որ դու այդքան հասկանում ես, կարդա, թէկուզ, այս կտորը և յետոյ նայիր աչքերիս... և եթէ դու չասես՝ քո աչքերը կասեն ինձ քո ներքին համոզմունքը...

Գարեգինը կարդում է լուս և, յետոյ, նայելով մի վոքք Վարդիքի աշերին փրտկացնում ծիծաղում է. վերջնը, ուրախացած այդ հանգամանքի վերայ, նոյնպէս ծիծաղում է:

ԳԱՐԵԳԻՆ

ԴԵ որ, եղբայր, դու պարզ սրտով ու համոզմունքով ես ասում, ես ԷԼ իմս ասեմ. ԷԼ թագյնելու կարիք չկայ. ոչ թէ միայն միտքը չեմ հասկանում, չեմ հասկանում, հասկանում ես, մինչև անգամ կոշտ ու կոպիտ, սոսինձով

կպցրած, նորաշնար բառերը, որոնք ո՛չ մի բառանում չես գտնիլ:

Վ.Ա.ՐԴԻԳԻՍ

Ե՛, փառք Աստուծոյ, իմ „չարքիս“ դիմակը բացուեց... Մնայ հիմա մեր ծառուկի „չարքը“:

ԳԱՐԵԳԻՆ

Կարապետ, Կարապետ:
ԿԱՐԱՊԵՏ անբառական ճանապարհում
Են, բարիո-նեամբ:
Հը...

ԳԱՐԵԳԻՆ

Դո՞ւ ինչպէս ես գտնում, հասկանում ես...
ԿԱՐԱՊԵՏ կարելով նորա խօսքը և բարիո-նեամբ:

Տօ, հերիք ԷԼաւ քո „հասկանումեն“ Է՛.
տասը խօսքի մէջ երկու հարիւր անգամ „հասկանումեն“ ես ասում: Հա՛, Հա՛, հասկանում եմ... յետոյ:

ԳԱՐԵԳԻՆ

Ե, լաւ, ի՞նչ ես նեղանում: վատ սովորութիւն է ինչ արած, հասկանու... թուհի... որ չի լինում:

ԿԱՐԱՊԵՏ բարիո-նեամբ և Ճաղալովը
Որ չի լինում... (Բարիայաձ): Մորթեցիր
ախար մեզ քո „հասկանումեներով“ Է՛: (Նոյնու է ուսանուածից):

ԳԱՐԵԳԻՆ իսպառ-Ելով, բայց ծիծաղովը, Վարդիկին:
Գիւ է գիւ:

ՎԱՐԴԻԿԵՍ ՃԵՇՄԱՂԱԾԱԼՈՒ

Թող նորան. նա ինձ խոստովանվեց. — նա էլ
ոչինչ չէ հասկանում. նա էլ է մեր օրին:

ԳԱՐԵԳԻՆ

Ուրեմն այսօր, հաս... մենք մեծ գիւտ
ենք արել:

ՎԱՐԴԻԿԵՍ

Նատ մեծ և ես ուրախ եմ: որովհետեւ
հոգեկան մեծ ձնշումից ազատուեցի. ինձ ան-
հանգիստ անող Հարքը՝ օդը ցնդվեց... Հա'.
բայց չիմացայ Ծառուկը քնեց թէ ոչ:

ԳԱՐԵԳԻՆ

Երեկի: (Քջոց) Բայց, հասկանում ես, այդ-
պէս չի լինի թողնել. հնար չկայ, որ մի իրո-
ղութիւն չլինի. քո Ծառուկը հասկան... մի բան
տեսնում է... էդ բոլորը լոկ երեակայութիւն
չպէտքէ լինի. գուցէ, հասկանում ես, գող ու
մող է ձեր բակում երեսում և նորա, հասկա-
նում ես...

ՎԱՐԴԻԿԵՍ

Ուզում ես ասել. երեակայութիւնը ստեղ-
ծում է զանազան սարսափելի պատկերներ...

ԳԱՐԵԳԻՆ

Այ, ինչպէս սատանայի, չարքի, հասկա-
նում ես...

ՎԱՐԴԻԿԵՍ

Այդ կարող է լինել. հաւանական է: Ապա
մի ես գնամ...

ԳԱՐԵԳԻՆ

Սպասիր, ես էլ եմ գալիս:

ՏԵՍԻԼ 13.

ԿԱՐԱՊԵՏ Քայն:

Երգից յետոյ բացուեց նորա լուսամու-
տը... ուրեմն՝ լսեց ձայնս... հասկացաւ ինձ:
(Երգում է նոյն Եղանակով):

Սպասիր դու ինձ և մի քանի բոպէ էլ.

Հիմայ կ' գամ, քեզի շուտով տեսնեմ.

Թող դադարեն, հանգիստ առնեն մի փոքր էլ,
Վերջին խօսքս, քեզ, իմ հրեշտակ, ասեմ:
Հասկանում ես (3, 4 անդամ):

(Մէ իսուր Քջոց նայում է լուսամուտից, ե՞ր մէ բան
սպասելով:) Զեռքով արեց... դարձեալ հասկացաւ
ինձ... սպասում է: (Նայելով անետով:) Ի՞նչ եղան
սորանք. մի թէ սորանք էլ են գնացել չարք բըռ-
նելու... հիմայ, երեկի, կ' գան... Ծառան քը-
նած... սորանք այստեղ... Այո, ես պէտք է
վերջնական որոշումս այս անգամ յայտնեմ: այս-
պէս շատ չի կարող տեսել. վերջ ու առաջ կա-
րելի է բռնուել և մեր այս միակ հնարքը կը-
խորտակուի և մենք կ' զրկուենք լոկ տեսու-
թիւնից անգամ: Ո՛չ, սարսափում եմ:

ՏԵՍԻԼ 14.

ԿԱՐԱՊԵՏ, ՎԱՐԴԳԵՍ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ

ՎԱՐԴԳԵՍ ՆԵՐԱ ԳԵՄԱՆ:

Տօ, եղբայր, ինչ պէտք է լինի է՛ կամ
ո՞վ պէտք է լինի ախար:

ԳԱՐԵԳԻՆ

ՉԵ՛, բայց, հասկանու մ ես, անկարելի է...
ես էլի կասեմ, մի բան կայ, որ մեզ համար
այսպէս ասած, հասկանումես, դժուար հասկա-
նալի է:

ՎԱՐԱՊԵՏ

Ե՛, վարդգէս, այս անգամ բարի գիշեր:

ՎԱՐԴԳԵՍ

Ի՞նչ ես շտապում:

ՎԱՐԱՊԵՏ

ՉԵ՛, եղբայր, դուք զբաղուած էք սատա-
նայ բռնելով, իսկ իմ միտքս և ուղեղս տւելի
նուրբ, աւելի նուիրական, աւելի քնքոյշ ըզ-
գացմունքներով է դբաղուած:

ԳԱՐԵԳԻՆ

Այսինքն... այսպէս ասած, հասկանումես...

ՎԱՐԱՊԵՏ

Հա, հա, հա, հասկանում եմ, էշ խօմ չեմ;
ես ամեն բան էլ հասկանում եմ, դու չես հաս-
կանում, դու... — պրծանք: Բարի գիշեր: (Գը-
նում է):

ՎԱՐԴԳԵՍ ՃԵԺՈՂԱՐԴ: Նորա երևիս:

Բարի գիշեր:

ԳԱՐԵԳԻՆ ՆԵՐԱԿԱԺ:

Սա դժուել է... Աստուած վկայ է դժուել
է, հասկան... սա ցնդել է:

ՎԱՐԴԳԵՍ

Տօ, այն ցեցը, որ դորա սիրտն է ընկել,
ի հարկէ կ'գժուի:

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ է որ, ի՞նչ ցեց:

ՎԱՐԴԳԵՍ

Չես իման՞ում: սա, ախար, սիրահարուած է:

ԳԱՐԵԳԻՆ

Հա՛... դր՞ա համար էք տաքացած տաքա-
ցած սերենադայ երգում: կարծես... Ո՞ւմ վե-
րայ է սիրահարուած:

ՎԱՐԴԳԵՍ

Դա գաղտնիք է, ոչ ոքի չէ ասում:

ԳԱՐԵԳԻՆ

Ուրեմն դա, հասկան... ուրեմն դա, էս-
պէս ասած... գտել է մի էնպիսի գուլցինէա,
որի... հասկան... շղթաներով կապուած է դը-
րա սիրտն ու հոգին... հասկանում եմ:

ՎԱՐԴԳԵՍ

Եւ ինչպէս երեւում է դորա սիրոյ չաս-
տուածուհին մեր փողոցումն է, կամ մեր տա-
նը շատ մօտ: Վերջին ժամանակներս էլ ոչ

առաւօտ, ոչ կէս օր և ոչ գիշեր է հարցնում.
օրական մի տասն անգամ գալիս է, ինձ մօտ:
ԳԱՐԵԳԻՆ
Սրա դուլցինէ՞ան ինչպէս. սիրում է սրճան:
ՎԱՐԴԳԻՍ
Ինչպէս երեսում է՝ սէրը փոխադարձ է:
ԳԱՐԵԳԻՆ
Բայց ինչո՞ւ սա չի ուզում:
ՎԱՐԴԳԻՍ
Ուզել է... կարծեմ չեն տուել:
ԳԱՐԵԳԻՆ
Էսպէս գժին էլ մարդ աղջիկ կտայ...
բայց, սպասիր, այսպէս ասած... ըը... հասկ...
Այս միջոցին բակից լսվում է րէվոլվէրի սաստիկ տրաքոց և
մի փոքր յետոյ աղմուկ: Վարդգէսը և Գարեգինը գեր են թռչում և
մի քանի ակնթարթ ապուշ և անշարժ դիրք են ընդունում իրար ե-
րեան նայելով: Դրայց լսվում է ծառուկի ձայնը աղմուկի միջից.
,,Բայց ուրիշ բանցանում, բունցեր, չը՞ ո, հաւաքանուի՞ւ: Այս ձայնից
սոքա սթափում են մի ակնթարթում, դուրս վազելով, անյետա-
նում են: Աղմուկը հետզհետէ մեծանում է: Մի փոքր յետոյ կրկին
ծառուկի ձայն, Ազա, անց ո, չէր հուսում յետոյ, բունէ, աղս...
ըստին... Զայները հետզհետէ մօտենում են. աղս պիտ բունէ, լո-
ւաշտանուի՞ւ... Վարդգէսը և Գարեգինը աջ և ձախ թներից բռնած
ներս են բերում կարապետն, որի լեզոն երկաղից կպած է: Մինչև
վարդարյի ինները դրսի աղմուկը և բացարդութիւնները շարունակ-
վում են: Ծառուկ կուլիսի ետևից, անեղ օտ օբու աղս, նե ւե հաւ-
ծաւուի՞ւ...

ՏԵՍԻԼ 15.

ՎԱՐԴԳԻՍ, ԳԱՐԵԳԻՆ, ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՑԵՏԱՅ
ՍԱՐՈՒԻՆ
ՎԱՐԴԳԻՍ և ԳԱՐԵԳԻՆ նէրն բէրէլով և նայէլով
Կարստիկ երեւին:
Վարա՛մ...

ԾԱՐՈՒԻՆ դրան մէջ:
Ասեղ ցցի աղա, ասեղ...
ՎԱՐԴԳԻՍ պաշտացած:
Աղա, մի մօտ արի, լաւ նայիր, ախմախ,
սա է...
ԾԱՐՈՒԻՆ հօդենալով և վայէլով:

Հենց ինքնա, աղա, պօզերը չես տենում...
(Վարդիկնելով նայում է Կարստիկ երեւին և վերին աս-
տիճանի զարմացած և երկու յեւ-երով ելքելով է-ը ծընկ-
նելին և, հարցելու, լուսնալով գուստում է) Ե ա-ա-ա...
ՎԱՐԴԳԻՍ

ԲՇ'մ, հողը գլխիդ, հողը: (Գարդեռին) Ու-
րեմն մեր տան տիրոջ աղջիկն է եղել սորա
դուլցինէան...
ԳԱՐԵԳԻՆ

Իսկի էսէնց սատանայ չիլնի: Հա, հա, հա...
(Սա և Վարդիկնելով ձիժաղում էն. Վարդիկնելով աշ-
խացում է Կարստիկ ս-շ-ի բերել իոհ Ծառուիլ
կշացած ուից և ընդունում):

Վարդեռյը:



— 7.5 —

... սահման ապահով է այս գործութեան
և զնացած ակտաւութեան պահանջ առաջ առ
պահանջ առաջաւութեան պահանջ առաջ առաջ
որի վերաբեր ուժութեան պահանջ առաջ առաջ
առաջ պահանջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
պահանջ պահանջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
պահանջ պահանջ պահանջ պահանջ պահանջ պահանջ



ՀՀ Ազգային գրադարան



NL0666934

ՀՀ Ազգային գրադարան



NL0666933

